Հաստատված է
«ԼԵՌՆԱՄԵՏԱԼՈՒՐԳԻԱՅԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ» ՓԲԸ
Խորհրդի 22.09.2025 թվականի № 38/1 որոշմամբ

«ԼԵՌՆԱՄԵՏԱԼՈՒՐԳԻԱՅԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ» ՓԲԸ

գործարար էթիկայի և կորպորատիվ վարքագծի կանոններ
նոր (երկրորդ) խմբագրությամբ

Հանդիսանալով «ԼԵՌՆԱՄԵՏԱԼՈՒՐԳԻԱՅԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ» ՓԲԸ (այսուհետ՝ Ընկերություն) աշխատող (ներկայացուցիչ), մենք գիտակցում և կարևորում ենք Ընկերության աշխատողների, ինչպես նաև Ընկերության գործընկերների, այցելուների և հասարակության լայն շրջաններում գործարար էթիկայի և կորպորատիվ վարքագծի կանոնների ստեղծման ու տարածման կարևորությունը, որին պետք է անխտիր հետևեն Ընկերության ղեկավար կազմն ու տարբեր ոլորտներում աշխատող մասնագետները:

Արժեքների անզուգադիպությունը հասարակության լայն շրջաններում տարակարծություններ է առաջացնում էթիկական նորմերի վերաբերյալ: Ընկերության գործարար էթիկայի և կորպորատիվ վարքագծի սույն կանոններում սահմանված են էթիկական այն նվազագույն չափանիշները, որոնց մենք պետք է հավատարիմ մնանք արագ և մշտապես փոփոխվող գործարար աշխարհում:

Ստորև բերված են Ընկերության ղեկավար անձնակազմի և մյուս աշխատողների գործարար էթիկայի և կորպորատիվ վարքագծի կանոնների հիմնական պայմանները՝

1. Ընկերության աշխատողներն իրենց գործընկերների և այցելուների հետ համագործակցում ու ծառայություններ են մատուցում, օգտագործելով Ընկերության տնօրինության տակ գտնվող բոլոր անհրաժեշտ միջոցները՝ հավատարիմ մնալով ստանձնած պարտավորությունների արդար, բաց և անկողմնակալ կատարման սկզբունքներին.

2. Ընկերության աշխատողները ձգտում են իրենց գործունեության տեղանքում և ոլորտին համապատասխան արտադրել լավագույն արտադրանքը, ինչպես նաև ծառայությունները մատուցել առավելագույն հնարավոր բարձր որակով.

3. Մենք պաշտպանում ենք մասնագիտական պատվի, մտավոր ազատության, իրավահավասար գործընկերության սկզբունքները և մեր գործունեության մեջ թույլ չենք տալիս այդ սկզբունքների խախտում.

4. Մենք չենք հրապարակում մեր գործընկերներին և այցելուներին, ինչպես նաև Ընկերության գործունեությանն ու աշխատողներին վերաբերող և գործի (պայմանագրային և այլ հարաբերությունների) բերումով մեզ հայտնի դարձած՝ գաղտնիք հանդիսացող տեղեկատվությունը.

5. Մենք բոլոր գործընկերներին, ինչպես նաև Ընկերության աշխատողներին վերաբերվում ենք անկողմնակալ, հարգալից, ինչպես նաև պաշտպանում ենք Ընկերության աշխատողների բարօրությունն ապահովող իրավունքները.

6. Մենք չենք խառնում մեր անձնական շահերը և մասնագիտական պարտականությունները, ձգտելով, որ անձնական համոզմունքները չներազդեն մեր աշխատանքի իրական խնդիրների վրա, չխոչընդոտեն ընկերության ու նրա աշխատողների ֆինանսական բարգավաճման անընդհատ աճի գործընթացին.

7. Մենք ձգտում ենք մեր մասնագիտական պարտականությունների անբասիր կատարմանը՝ մասնագիտական մակարդակի մշտական բարձրացման ու հանձնարարված խնդիրների պատասխանատու և որակյալ կատարման միջոցով, իրականացնելով ներքին աշխատակարգով հաստատված պահանջները.

8. Մենք պատրաստ ենք, յուրաքանչյուր օր հաղթահարելով անձնական ժամանակավոր դժվարությունները՝ սիրալիր, միշտ ժպտադեմ ընդունել մեր գործընկերներին.

9. Ընկերության ղեկավար անձնակազմը Ընկերության շահերը վեր է դասում անձնականից և առաջնորդվելով Ընկերության բարօրության բարձրացման գաղափարով՝ գործադրում է Ընկերության կանոնադրությամբ և գործադիր մարմնի ղեկավարի հրամաններով իրեն վերապահված լիազորությունները:

10. Ընկերության աշխատողների (երկու և ավելի) որևէ ներկայացուցչական վայրում և (կամ) միջոցառման ընթացքում միաժամանակյա գտնվելու դեպքում հնարավոր և (կամ) անհրաժեշտ որոշում կայացնելու իրավունքը (ներառյալ պահանջվող ֆինանսական վճարումների վերաբերյալ որոշման կայացումը, ինչպես, օրինակ, վճարել, թե չվճարել, ինչ ձևով վճարել, կամ ընդունել գործընկերոջ վճարման առաջարկը, թե ոչ) վերապահվում է ի պաշտոնե ավագ աստիճան ունեցող աշխատողին, իսկ ամենացածր աստիճան (պաշտոն) ունեցող աշխատողն իր հերթին պատասխանատու է համապատասխան արձանագրության կազմման (վարման) համար: